ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ ԳԱՌՆԻԿԻ

ՑԻՆԻԶՄԸ ՈՐՊԵՍ ԱՄԲՈՒԽԻ ՄԱՐԴՈՒ ՍՈՑԻՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԴԻՄԱԿ

Թ. 00. 04 – «Սոցիալական փիլիսոփայություն, բարոյագիտություն» մասնագիտությամբ փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2016

Ատենախոսությանթեմանհաստատվել է Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի գիտական խորհրդում

Գիտական ղեկավար՝ փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էդ. Ա. Հարությունյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Ե. Մկրտիչյան

փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ Մ.Հ.Դեմիրճյան
,

Առաջատար կազմակերպություն՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2016 թ. հունիսի 23-ին ժամը 15:00-ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՀ-ի Փիլիսոփայության և սոցիոլոգիայի 013 մասնագիտական խորհրդի նիստում:

Մասնագիտական խորհրդի հասցեն՝ 0025, ք. Երևան, Աբովյան փ., 52ա, Երևանի պետական համալսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանի գիտական աշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2016թ. մայիսի 22-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ փ.գ.թ., դոցենտ Գ. Ա. Սողոմոնյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ:

Հետազոտության արդիականությունը: Ժամանակակից աշխարհին բնորոշ սպառողականության, բարոյական հարաբերապաշտության, աշխարհայացքային բազմազանության, հաճույքապաշտության, հանրանշանակ արժեք-ների նկատմամբ անտարբերության, քաղաքականության ոլորտում ուժային փաստարկների գերակայության և սոցիոմշակութային տեսանկյունից մի շարք ապակառուցողական միտումները վկայում են, որ արդի սոցիոմշակութային իրականությունում նպաստավոր պայմաններ են ստեղծվել ցինիզմի, որպես կեն-սափիլիսոփայության եղանակի ձևավորման և տարածման համար: Ընդ որում՝ ի տարբերություն նախորդ դարաշրջանների, որտեղ ցինիզմը սոցիոմշակութային իրականության նկատմամբ անդրադարձի անհատական կենսափիլիսո-փայության եղանակ էր, ժամանակակից աշխարհում այն վերածվել է ամբոխի մարդուն բնորոշող որակական որոշակիության: Ժամանակակից քաղաքակը-թությանը բնորոշ անդեմությունն ու երբեմնի հանրանշանակ արժեքային համակարգերի արժեզրկման միտումները նպաստավոր պայմաններ են ստեղ-ծում ամեն տեսակ արժեք և իդեալ ժխտող ցինիզմի՝ իբրև ամբոխի մարդու սո-ցիոմշակութային դիմակի դրսևորման համար, ինչը սոցիոմշակութային տեսանկյունից լուրջ մարտահրավեր է արդի քաղաքակրթության համար: Այս տեսանկյունից ժամանակակից ամբոխի մարդու վարքին բնորոշ ցինիզմը, ինչպես նաև սոցիոմշակութային դիմակի հիմնախնդիրը ձեռք են բերել տեսա-կան և գործնական մեծ հնչեղություն:

Մասնագիտական գրականության մեջ ցինիզմը առավել հաճախ քննարկվում է որպես բարոյական նորմերի և վարքանմուշների նկատմամբ մեր-ժողական, քննադատական աշխարհայացքի տարատեսակ, որի գաղափարա-կան ակունքները հասնում են մինչ անտիկ հունական աշխարհում տարածում գտած կինիզմի փիլիսոփայական դպրոցին («կինիզմ» անվանումը ծագում է Կինոսարգ գիմնազիայի անվանումից կամ «կինեոս» հուն. բառից (թարգմ. շուն), որից ծագում է լատ. «ցինիկ» բառը): Հարկ է նկատել նաև, որ ինչպես ամբոխի մարդու, այնպես էլ սոցիոմշակութային դիմակի հիմնախնդիրները մասնա-գիտական գրականությունում բազմակողմանիորեն ուսումնասիրված խնդիրներ են: Ամբոխի մարդու՝ որպես զանգվածային հասարակության սոցիոմշակութային ներկայացուցչի հիմնախնդիրը, տեսաբանների ուշադրությանն է արժանացել դեռևս 19-րդ դարի վերջից սկսած, ընդ որում հանգամանորեն քննարկվել են ամբոխի մարդու ինչպես սոցիալ-հոգեբանական (Արենդտ, Թարդ, Լեբոն, Մոսկովիչի, Ֆրոյդ և այլք), այնպես էլ՝ սոցիոմշակութային (Օրտեգա-ի-

Գասսետ, Շպենգլեր, Յասպերս, Մարկուզե և այլք) առանձնահատկությունները: Սակայն ցինիզմի՝ որպես ժամանակակից աշխարհում զանգվածային հասարակության, անդեմ մեծամասնության ներկայացուցչի՝ ամբոխի մարդու սոցիոմշակութային դիմակի հիմնախնդիրը մասնագիտական գրականության մեջ չի արժանացել պատշաճ ուշադրության, ինչն էլ հիմնախնդրի հետազոտությունը դարձնում է արդիական:

Որպես կենսափիլիսոփայության տարատեսակ՝ ցինիզմը պատմակա-նորեն ի հայտ է եկել այն հասարակություններում, որոնք գտնվել են սոցիոմշա-կութային մեծ փոխակերպումների փուլում, երբ նախկինում գործող արժեքային համակարգերը, կենսիմաստային ուղղորդիչները, աշխարհայացքային պատկե-ռացումները ենթարկվել են լուրջ ցնցումների, փոփոխությունների: Այդ դեպքում սոցիոմշակութային կառուցվածքաստեղծ արժեքներն ու իդեալները կորցնում են իրենց երբեմնի կենսունակությունը, և հաճախ դադարում են ընկալվել որպես կենսիմաստային ուղղորդիչներ: Այս համատեքստում ցինիզմը կարելի է սահմա-նել որպես կենսափիլիսոփայության այնպիսի տեսակ, որը ժխտում է սոցիոմշա-կութային հանրանշանակ արժեքների և իդեալների գոյության ինչպես հնարա-վորությունը, այնպես էլ՝ «իրավունքը», վերջիններիս մեկնաբանում է որպես խաբկանքներ, պատրանքներ կամ մոլորություններ: Ցինիզմը՝ որպես կենսափի-լիսոփայության տեսակ նոր երևույթ չէ մարդկության համար, սակայն, եթե նախորդ դարաշրջաններում ցինիզմը բնորոշ էր միայն հասարակության «լու-սանցքային» փոքրամասնությանը, ապա ժամանակից աշխարհում այն դարձել է միաչափ և անդեմ մեծամասնության որակ: Սոցիոմշակութային արժեքների և իդեալների նկատմամբ մերժողական կենսափիլիսոփայության եղանակներ են նաև անտիկ հունական կինիզմը և արդիականության դարաշրջանում ծագած նիհիլիզմը: Սակայն ժամանակակից ցինիզմը՝ կինիզմից և նիհիլիզմից տարբերվում է անռվազն երկու գործոններով: Նախ՝ եթե կինիզմը և նիհիլիզմը մերժում էին տիրող կարգերը, հայտարարում էին հասարակության դավանած կուռքերի կեղծավորության մասին, ապա ժամանակից ցինիզմը հաշտվել է այն հանգամանքի հետ, որ մարդկային հասարակությունը մշտապես կուռքերի կարիք ունի, և հնարավոր չէ մարդկությանը ետ պահել կռապաշտությունից: Եթե կինիզմն ու նիհիլիզմը, մերժելով տիրող արժեքներն ու իդեալները, «առաջար-կում էին» այլ արժեքներ և իդեալներ, ապա ցինիզմը մերժում է որևէ արժեքի կամ իդեալի լինելիության հնարավորությունը: Այնուհետև՝ եթե կինիզմը և նիհի-լիզմը որպես կենսափիլիսոփայության տարատեսակներ որդեգրվել են հասարա-կության ինչ-ինչ լուսանցքային խմբերի կողմից, ապա ժամանակակից աշխար-հում ցինիզմն արդեն ոչ թե

հասարակության լուսանցքում հայտնված մարդկանց բնորոշող որակներից մեկն է, այլ՝ զանգվածների, անդեմ մեծամասնության, միաչափ ամբոխի մարդու ամենօրյա կենսակերպէ ու կենսափիլիսոփայություն:

Ցինիզմի, որպես ժամանակակից հասարակություններում գործառող կենսափիլիսոփայության տարածման միտումները անուղղակիորեն առնչվում են պատմության թատերաբեմում հայտնված ամբոխի մարդու մարդաբանական փոխակերպումների հետ: Այն առաջին հերթին կապված է արդյունաբերական քաղաքակրթության ձևավորման հետևանքով ի հայտ եկած անդեմ մեծամասնության հասարակության՝ զանգվածային հասարակության (որի սոցիոմշակութային ներկայացուցիչը ամբոխի մարդն է) ձևավորման և հետագա մարդաբանական փոխակերպումների հետ: Արդյունաբերական հասարակությ-ան ձևավորման հետևանքով ի հայտ եկած զանգվածային հասարակության սոցիոմշակութային տեսակը՝ ամբոխի մարդը, «ազատվելով» ավանդական հասարակություններին բնորոշ սոցիոմշակութային աստիճանակարգություններ-ից և կենսիմաստային ուղղորդիչներից, իր կենսական տարածությունը մեկնա-բանելու և իմաստավորելու համար պահանջում էր նոր նույնականություն և նոր պատմություն, ինչը նագտնում է արդիականացման նախագծի ուտոպիաներում, առասպելներում և գաղափարախոսություններում: Այդ է պատճառը, որ արդիա-կանացման նախագծից ծնունդ առած գաղափարախոսություններն ու ուտոպիաները (ընկերվարություն, համայնավարություն, ազատականություն և այլն) ի վերջո դարձան ամբոխի մարդու կենսիմաստային ուղղորդիչներ: Մինչ-դեռ այդ ուտոպիաներն ու առասպելները քաղաքակրթական, քաղաքական և սո-ցիոմշակութային զարգացումների հետևանքով ունեցան տարբեր ճակատագ-րեր: Եթե արդիականության դարաշրջանում անդեմ ամբոխի մարդը, իր առաս-պելական աշխարհայացքը տուրք տալով, հակված էր հավատալու այդ առասպելներին և ուտոպիաներին, ապա ժամանակակից աշխարհում նկատվում են այդ առասպելների և ուտոպիաների հիմքում ընկած արդիականացման նա-խագծի արժեքների և իդեալների (բանապաշտության, զարգացման, լուսավո-րության, արդարության, հավասարության և ազատության սկզբունքներով կազ-մակերպված հասարակության և այլն) մարմնավորման նկատմամբ կասկածա-պաշտական, անգամ մերժողական ինչ-ինչ միտումներ, ինչը խոսում է, որ ժամա-նակակից ամբոխի մարդը, ի տարբերություն արդիականության դարաշրջանի ամբոխի մարդու, հաճախխաղում է ցինիկի դեր, կրում է ցինիզմի սոցիոմշա-կութային դիմակը՝ պատսպարվելով արժեքների ճգնաժամ ապրող սոցիոմշա-կութային իրականությունից: Ցինիզմը ժամանակակից ամբոխի մարդու համար կատարում է սոցիոմշակութային դիմակի դեր,

քանզի նա, ըստ էության, չի կարող լինել ցինիկ, քանի որ, լինելով անդեմ, նա այս կամ այն պատումների տեսքով կարիք ունի կենսիմաստային ուղղորդիչների, որոնց միջոցով նա մեկ-նաբանում և ընկալում է իր կենսական տարածությունը, մինչդեռ ժամանակակից աշխարհի հակասական բնույթը հաճախ ամբոխի մարդուն պարտադրում է պա-տըսպարվել ցինիզմով, մերժել ոչ միայն այդ պատումների գոյությունը, այլ ընդ-հանրապես վերջիններիս գոյության իրավունքը:

Հիմնախնդրի արդիականությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ ժամանակակից ամբոխի մարդու ցինիկ կենսափիլիսոփա-յությունը վտանգում է մարդկանց շահերն ու պահանջները ներկայացնող քաղա-քականության բնականոն գործունեությունը: Եթե նախորդ դարաշրջանում հա-սարակության լայն զանգվածները դեռ հավատում էին քաղաքական առասպել-ներին և դրանց իրականացման գաղափարախոսական խոստումներին, ապա ժամանակակից աշխարհում ձևավորվել է այսպես կոչված «լռող մեծամաս-նության» (Բոդրիար) հասարակությունը, որը քաղաքականությանը հաճախ վե-րաբերվում է իբրև բեմադրության, որին ընդամենը մասնակցում է հանդիսա-տեսի կարգավիճակով: Արդիականության դարաշրջանի երբեմնի հավակնոտ ամբոխի մարդը քաղաքական նոր իրողություններում դարձել է հոռետես (նաև իրատես) և օրեցօր ավելի ու ավելի հազվադեպ է ներառվում քաղաքական գործընթացների մեջ: Նախորդ դարաշրջանի հավակնոտ և բողոքական ամբո-խի մարդը ներկայում հաճախ նախընտրում է «լռել» և ընտրել է չմասնակցութ-յան խուսափողական կենսակերպը:

Սակայն, հարկ է նկատել, որ ցինիզմը նաև ախտանշում է սոցիալականության ինչ-ինչ «հիվանդությունների» մասին: Ժամանակակից հա-սարակություններում նկատվող ցինիզմի միտումները խոսում են ոչ միայն արդի աշխարհում առկա արատավոր միտումների՝ բարոյական հարաբերապաշ-տության, սպառողականության, նյութապաշտության, հաճույքապաշտության, հոռետեսության մասին, այլ նաև վկայում են, որ մարդը չի կորցրել գաղափա-րախոսական պատրանքներին հակադրվելու դիմադրողականությունը: Այս իմաստով ցինիզմը ոչ թե լուսավորականությունից սկիզբ առած բանապաշ-տության, պատրանքային մտածողության քողազերծման նախագծի ձախողման հետևանք է, այլ՝ «բանականության հաղթարշավի» հերթական կայանն է, որից ելքերը կարող են տանել ինչպես մարդու բարոյալքմանն ու ապամշակութայ-նացմանը, այնպես էլ նոր հոգևոր լիցքեր ստանալուն և սոցիոմշակութայինոր արժեքներ արարելուն:

Հիմնախնդրի գիտատեսական մշակվածության աստիճանը: Ատենախոսության հիմնախնդրի վերաբերյալ մասնագիտական գրականությունում չկան ընդհանրական մոտեցումներ:

Հիմնախնդրի հետազոտությունը կոտորակվել է երկու բաժինների, որոնցից առաջինի դեպքում քննարկվում է ամբոխի մարդու ծագումնաբանությունը և էվոլյուցիան, երկրորդի դեպքում՝ ցինիզմը դիտարկվում է որպես ժամանակակից ամբոխի մարդու սոցիոմշակութային դիմակ, որը ձևավորվել է արդի քաղաքակրթության քաղա-քակրթական, քաղաքական և սոցիոմշակութային փոխակերպումների հետևան-քով:

Ամբոխի մարդու և նրա վարքին բնորոշ ցինիկ դրսևորումների ծագում-նաբանությունը քննարկվել է մասնագիտական գրականությունում առկա երկու հիմնական մոտեցումների տեսանկյունից՝

ա) սոցիալ-հոգեբանական (Գ. Աշին, Գ. Թարդ, Գ. Լեբոն, Զ. Ֆրոյդ, Հ. Նազարեթյան, Հ. Արենդտ, Ն. Միխաիլովսկի, Ս. Մոսկովիչի, Ս. Սիգելե, Վ. Ռայխ),

բ) սոցիոմշակութային (Ա. Շվեյցեր, Դ. Բել, Դ. Ռիսմեն, Է. Թոֆլեր, Է. Մունյե, Խ. Օրտեգա-ի-Գասսետ, Կ. Յասպերս, Օ. Շպենգլեր, Ռ.Գվարդինի):

Ժամանակակից ամբոխի մարդուն բնորոշ ցինիզմի առաջացումը պայմանավորված է մի շարք սոցիոմշակութային գործընթացներով, համապա-տասխան որոնց մասնագիտական գրականությունում առկա մոտեցումներն ընդ-հանրացվել են չորս հիմնական խմբերում՝

ա) աշխարհիկացման գործընթացներ (Գ. Բլումեր, Գ. Զիմմել, Է. Ֆրոմ, Մ. Մաքլյուեն, Ս. Հանթինգտոն, Ս. Ֆրանկ),

բ) ապասրբազանացման գործընթացեր (Ա. Լոսև, Է. Կասսիրեր, Է. Միրչա, Կ. Մանհեյմ, Կ. Յունգ),

գ) արդիականության դարաշրջանի արժեքների և իդեալների ճգնաժամային միտումների գործընթացներ (Թ. Ադոռնո, Մ. Հորկհայմեր, Հ. Մարկուզե, Յ. Հաբերմաս),

դ) հետարդիականության սոցիոմշակութային միջավայրի ձևավորման գործընթացներ (Զ. Բաուման, Ժ. Բոդրիար, Ժ. Լիոթար, Ժ. Լիպովեցկի, Մ. Ֆուկո, Պ. Ռիկյոր և այլք),

Ցինիզմը՝ որպես սոցիոմշակութային երևույթ հիմնովին ներկայացված է գերմանացի հայտնի մտածող Պ. Սլոտերդայկի աշխատություններում: Ցինիզմի քաղաքական և գաղափարախոսական դրսևորումներին հանգամանորեն անդրադարձել է սլովենացի մտածող Ս. Ժիժեկը:

Ընդհանրացնելով մասնագիտական գրականությունում առկա մոտեցումները՝ կարելի է առանձնացնել ցինիզմի դրսևորման երկու հիմնական գործոններ՝ ա) արտաքին, որի բաղկացուցիչներն են համարվում սպառողական հոգեբանության և սպառողական գաղափարախոսության տարածումը (Ռ.Առոն, Ս.Ժիժեկ, Գ. Դեբոր), ինչպես նաև փոխակերպական գործընթացները (Է. Դյուրկհեյմ, Ուի. Բեկ), բ) ներքին, որի բաղադրիչներ են համարվում տարածվող «իռացիոնալ տագնապը», օտարվածությունը, ատելությունը,

հոռետեսությունը, նիհիլիզմը (Ա.Քամյու, Է. Սիորան, Մ. Հայդեգեր, Ն.Բերդյաև, Ֆ.Նիցշե):

Անդրադառնալով հիմնախնդրի հետազոտությանը վերաբերող հայկական տեսական մտքի ժառանգությանը՝ հարկ է նկատել, որ թեև հիմնախնդրի որոշ բաղկացուցիչներ՝ սոցիոմշակութային փոխակերպումներ, քաղաքակրթական պարադոքսներ, սպառողական հասարակության և զանգվածային մշակույթի գործառական առանձնահատկություններ և այլն քննարկվել են ժամանակակից հայ տեսաբանների կողմից (Աթայան Է., Գևորգյան Հ., Հարությունյան Է., Միրզոյան Վ., Մկրտչյան Ա., Սարգսյան Ա., Սողոմոնյան Գ. և այլ), բայց հիշյալ վերլուծություններում հիմնախնդիրը չի հանդիսացել հետազոտության թիրախ:

Հետազոտության մեթոդաբանական հիմքերը: Ատենախոսության մեթոդաբանական հիմքերն են պատմականության, համադրական-վերլուծական և համեմատական մեթոդները: Պատմականության մեթոդը կիրառվել է ամբոխի մարդու ծագումնաբանությունն ու մարդաբանական էվոլյուցիան նկարագրելու համար: Համադրական-վերլուծական մեթոդի կիրառման շնորհիվ իրականաց-վել է հետազոտության առանձին առարկաների համադրական վերլուծություն, բացահայտվել են վերջիններիս տրամաբանական, ծագումնաբանական և իմաստային կապերը: Ցինիզմի՝ որպես կենսափիլիսոփայության վերլուծության և սոցիոմշակութային դրսևորումների բացահայտման նպատակով օգտագործվել է համեմատական մեթոդը, ինչի շնորհիվ վեր են հանվել կինիզմի, նիհիլիզմի, հոռետեսության և ցինիզմի ընդհանրություններն ու տարբերությունները: Հետազոտության տեսական ընդհանրացումների, արդի սոցիոմշակութային իրողությունների համապարփակ հետազոտության համար օգտագործվել են սոցիալական փիլիսոփայության, սոցիալական հոգեբանության, սոցիոլոգիայի և մշակութաբանության միջգիտակարգային հետազոտական սկզբունքները:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության նպատակն է ցինիզմը ներկայացնել որպես ժամանակակից ամբոխի մարդու սոցիոմշակութային դիմակ, ինչի իրագործման նպատակով հետազոտության ընթացքում առաջադրվել են երկու ելակետային հիմնահարցեր.

ա) ներկայացնել ամբոխի մարդու ձևավորման և մարդաբանական փոխակերպման պատմական էվոլյուցիան,

բ) ցինիզմը դիտարկել որպես ժամանակակից ամբոխի մարդու սոցիոմշակութային դիմակ:

Ատենախոսության նպատակի իրագործման համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

. անդեմությունը դիտարկել որպես արդի քաղաքակրթությանը բնորոշ մարդաբանական որակ,

. ամբոխի մարդու՝ որպես սոցիոմշակութային տեսակի ձևավորումը մեկնաբանել զանգվածային հասարակության և «ցրված ամբոխի» (Մոսկովիչի) ձևավորման համատեքստում,

.ներկայացնել ստվերային ինքնության դրսևորումները ամբոխի մարդու հոգեկերտվածքում,

. առասպելականացումը դիտարկել որպես արդիականության դարաշր-ջանի ամբոխի մարդու կենսաշխարհի կառուցարկման եղանակ,

. հետազոտել ամբոխի մարդու մարդաբանական էվոլյուցիան արդի քա-ղաքակրթական փոխակերպումների համատեքստում,

. ցինիզմը վերլուծել արդիականության դարաշրջանի արժեքների և իդեալների արժեզրկման միտումների համատեքստում,

. ուսումնասիրել ժամանակակից ամբոխի մարդու ցինիկ կենսափիլիսո-փայության ձևավորման սոցիոմշակութային պայմաններն ու դրսևորման առանձնահատկությունները,

. արդի քաղաքակրթությանը բնորոշ «լռող մեծամասնության» ֆենոմենի, չմասնակցության սոցիոմշակութային կենսակերպի, հոռետեսության և անտարբերության երևույթները մեկնաբանել հետարդիականության դարաշր-ջանի ամբոխի մարդու ցինիզմի համատեքստում:

Հետազոտության գիտական նորույթը: Ժամանակակից ամբոխի մարդու ծագումնաբանության, մարդաբանական էվոլյուցիայի և սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների վերլուծության հիման վրա վերեն հանվել արդի հասարակություններում ցինիզմի ձևավորման և տարածման սո-ցիոմշակութային նախադրյալները, և ցինիզմի որպես կենսափիլիսոփայության ու սոցիոմշակութային դիմակի դրսևորման առանձնահատկությունները: Այս հա-մատեքստում արվել են տեսական և գործնական նշանակություն ունեցող, գիտական նորույթ պարունակող մի շարք եզրակացություններ ու ընդհանրա-գումներ.

.հիմնավորվել է այն թեզը, որ անդեմությունը ինչպես արդի քաղա-քակրթության մարդաբանական ճգնաժամի հետևանք է, այնպես էլ ցինիզմի ձևավորման հիմնային նախադրյալներից է,

. ամբոխի մարդը արդի քաղաքակրթությանը բնորոշ զանգվածային հասարակության սոցիոմշակութային տեսակ է, որը բնութագրվում է անդե-մությամբ, անպատասխանատվությամբ, վարքի տարերայնությամբ, պարզունա-կությամբ, և այլ հատկանիշերով,

. ձևավորվելով արդյունաբերական քաղաքակրթության միջավայրում՝ ամբոխի մարդը, սակայն, հետագա քաղաքակրթական, քաղաքական և սո-ցիոմշակութային

զարգացումների հետևանքով ենթարկվում է մարդաբանական փոխակերպումների,

. ցինիզմը դիտվել է որպես այնպիսի կենսափիլիսոփայության տեսակ, որին բնորոշ է սոցիոմշակութային իրականության ապասրբազանացումը, արժեքների և իդեալների նկատմամբ ժխտողական վերաբերմունքը, ապագայի նկատմամբ ոչնչապաշտական և հոռետեսական տրամադրությունները,

. ժամանակակից մարդաբանական փոխակերպումները սոցիալական բեմահարթակ են մղում ամբոխի մարդու մի նոր տարատեսակի, որին բնորոշ են սպառողականությունը, հաճույքապաշտությունը, հոռետեսությունը, իրատեսությունը, անտարբերությունը, չմասնակցությունը և ցինիզմը,

. այս համատեքստում ցինիզմը ոչ միայն մարդաբանական ճգնաժամի ախտանիշ է, այլ նաև ամբոխի համար ծառայում է որպես սոցիոմշակութային դիմակ, որպես կենսիմաստային ապաստարան, որի միջոցով նա պատսպար-վում է ժամանակակից աշխարհի ապակառուցողական դրսևորումներից,

. քաղաքականության ոլորտում տարածվող «չմասնակցության» սոցիոմշակութային կենսակերպը, մշակույթի ոլորտում սպառողական արժեքների գերակայությունը, բարոյականության ոլորտում բարոյական հարա-բերապաշտությունը ամբոխի մարդու ցինիզմի սոցիոմշակութային դրսևորումներից են:

Պաշտպանության ներկայացված դրույթները: Վերլուծելով ցինիզմի՝ որպես ամբոխի մարդու սոցիոմշակութային դիմակի ձևավորման քաղաքակրթական, քաղաքական և մարդաբանական նախադրյալները, ի մի բերելով խնդրի վերաբերյալ մասնագիտական գրականությունում առկա մոտեցումներն ու տեսակետները, ամփոփելով հետազոտության արդյունքները՝ պաշտպանության են ներկայացվել հետևյալ դրույթները.

. Հաշվի առնելով այն իրողությունը, որ արդի քաղաքակրթության սոցիոմշակութային ճգնաժամի հետևանքով գերիշխող է դարձել զանգվածային-հրապարակային կյանքը, ուր գլխավոր դերակատարը անդեմությամբ աչքի ընկնող ամբոխի մարդն է, առաջին անգամ ատենախոսության մեջ անդեմությունը դիտարկվել է որպես արևմտյան քաղաքակրթությանը բնորոշ մարդաբանական որակ:

. Ամբոխի մարդու ձևավորումը քննարկելով արդիականության քաղաքակրթական և սոցիոմշակութային փոխակերպումների և զանգվածային հասարակության ձևավորման համատեքստում՝ առաջադրվել և հիմնավորվել է գիտական հետաքրքրություն ներկայացնող այն դրույթը, որ ամբոխի մարդու հոգեկերտվածքում դրսևորվում են ստվերային ինքնության որոշ որակներ, իշխում են հոտային մղումները և զանգվածային համակեցության միտումները:

. Վերլուծելով ավանդական հասարակությունների կյանքի մշակույթի կազմաքանդման և աշխարհի ապակրոնականացման միտումներն ու հետևանքները, ատենախոսության մեջ առաջին անգամ հանգամանորեն վերլուծվել են այն սոցիոմշակութային տեղաշարժերը, որոնց հետևանքով առասպելականացումը, իդեալական աշխարհի զանազան հովվերգություններն ու ուտոպիաները վերածվում են ամբոխի մարդու կենսաշխարհի կառուցարկման իմաստային կողմնորոշիչների:

. Վերլուծվել և հիմնավորվել է այն կանխավարկածը, որ ցինիզմը և հոռետեսությունը, որոնք բնութագրում են ժամանակակից ամբոխի մարդու մարդաբանական փոխակերպումների առանձնահատկությունները, արդիականության նախագծի կողմից առաջադրված արժեքային համակարգի ճգնաժամի և քաղաքական խոստումների ձախողման արդյունք են: Ելնելով այդ իրողությունից, ատենախոսության մեջ արդիականության և հետարդիականության ժամանակների ամբոխի մարդու կենսաշխարհի կառուցարկման հիմքում ըն-կած են ելակետային տարբեր հարացույցեր. առաջին դեպքում որոշիչ էին առասպելները, երկրորդ դեպքում՝ ուտոպիաների տեխնիկապես իրագործելի ծրագրերը:

. Ցինիզմը դիտարկվել է որպես սոցիոմշակութային արժեքների և իդեալների նկատմամբ մերժողական կենսափիլիսոփայության եղանակ, որը հետարդիականության դարաշրջանի ամբոխի մարդու կողմից որդեգրվել է՝ որպես արդիականության դարաշրջանի առասպելների և ուտոպիաների ճգնաժամի հետևանքով առաջացած կենսիմաստային դատարկությունից, անո-րոշությունից, հուսահատությունից պաշտպանվելու սոցիոմշակութային դիմակ:

. Հետարդիականության դարաշրջանին բնորոշ սպառողական կենսա-կերպն ու տեղեկատվական նորագույն համակարգերը դիտարկելով որպես ար-դիականության դարաշրջանի բարեկեցության և լուսավորության իդեալների մարմնավորման օրինակներ՝ առաջ է քաշվել այն դրույթը, որ ժամանակակից աշխարհում փոխվել է բարեկեցության և ինքնիշխանության հաշվեկշիռը և բարեկեցության արժեքին նախապատվություն տվող ամբոխի մարդուն առավել հոգեհարազատ է ցինիզմի կենսափիլիսոփայությունը:

. Բանապաշտության, սոցիալական պատասխանատվության, գործուն քաղաքացիական կենսադիրքորոշման կենսիմաստային կառուցարկիչների հանրային կարևորության արժեզրկման հետևանքով ժամանակակից ամբոխի մարդը սոցիալական կյանքի արդիականացման և կատարելագործման ծրագ-րերի նկատմամբ կողմնակի դիտորդի կենսադիրքորոշում ունի, ապավինել է «չմասնակցելու փիլիսոփայությանը»:

Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսության մեջ առաջադրված տեսական խնդիրները, արված ընդհանրացումներն ու ստացված եզրակացությունները ունեն տեսական և գործնական նշանակություն, կարող են օգտագործվել հետևյալ նպատակներով՝

. հարստացնել սոցիալական փիլիսոփայության տեսական պաշարը առաջ քաշվող հիմնախնդիրների մասին,

. մեթոդաբանական ուղեցույցի դեր կատարել կինիզմի, նիհիլիզմի և ցինիզմի սոցիալ-փիլիսոփայական վերլուծություններում,

. օգտագործվել ժամանակակից հասարակությունների մարդաբանական և սոցիոմշակութային առանձնահատկությունների ուսումնասիրություններում,

. կարող են կիրառվել սոցիալ-փիլիսոփական, սոցիալ-հոգեբանական, սոցիոլոգիական, քաղաքագիտական, մշակութաբանական հետազոտություններում,

. նպաստել հիմնախնդրի հետագա ուսումնասիրություններին և հետազոտություններին:

Ատենախոսության փորձաքննությունը: Ատենախոսության նախնական տարբերակը քննարկվել է ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի սոցիալական փիլիսոփայության և բարոյագիտության ամբիոնի 2015թ.-ի նոյեմբերի 29-ի նիստում, իսկ վերջնական տարբերակը քննարկվել է նույն ամբիոնի 2016թ.-ի ապրիլի 7-ի նիստում, որտեղ ատենախոսությունը երաշխավորվել է հրապարակային պաշտպանության: Ատենախոսության հիմնական դրույթներն ու գաղափարները ներկայացվել են ԵՊՀ սոցիալական փիլիսոփայության և բարոյագիտության ամբիոնի սեմինարքննարկումներում (2013-2016 թթ.), և արտացոլված են հեղինակի գիտական հոդվածներում: Հետազոտության առանձին դրույթները քննարկվել են նաև ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի սոցիալական փիլիսոփայության և բարոյագիտության ամբիոնի «Արդիականության հոգևոր ճգնաժամը և նրա դրսևորման առանձնահատկությունները հայոց փոխակերպվող սոցիումում» գիտական թեմայի շրջանակներում:

Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, որոնցից առաջին գլուխը՝ չորս, իսկ երկրորդը՝ երեք ենթագլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից: Ատենախոսության ծավալն է 154 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է հիմնախնդրի արդիականությունը, ներկայացվել է գիտատեսական մշակվածության աստիճանը, առաջ են քաշվել հետազոտության նպատակներն ու խնդիրները, մեթոդաբանական սկզբունք-ները, ձևակերպվել են գիտական նորույթ պարունակող դրույթները, հիմնավոր-վել է հետազոտության տեսական ու գործնական նշանակությունը:

Առաջին գլուխը՝ «**Ամբոխի մարդու մարդաբանական բնութագիրը ար-դիականության համատեքստում**», նվիրված է արդյունաբերական քաղա-քակրթությանը բնորոշ ամբոխի մարդու ձևավորման քաղաքակրթական, քաղա-քական և մարդաբանական նախադրյալների, նրա սոցիոմշակութային և սոցիալ-հոգեբանական նկարագրի, կենսական տարածության կառուցարկման առանձնահատկությունների, մարդաբանական փոխակերպումների վերլուծություն:

«**Անդեմությունը որպես արդի քաղաքակրթության մարդաբանական որակ**» ենթագլխում ներկայացվում է ամբոխի մարդու մարդաբանական, սոցիոմշակութային և սոցիալ-հոգեբանական բնութագիրը, որին բնորոշող որակներից դիտարկվում է անդեմությունը: Արդյունաբերական քաղաքակրթության ձևավորման համատեքստում տեղի են ունենում ժողովրդագրական շրջադարձային փոխակերպումներ, երբեմնի ավանդական հասարակությունները ենթարկվում են արմատական փոփոխությունների, ինչի արդյունքում սոցիալական կյանքի բեմահարթակում հայտնվում է խճանկարային քաղա-քակրթության հիմնական դերակատարը՝ ամբոխի մարդը՝ իրեն բնորոշ սոցիոմշակութային, մարդաբանական և սոցիալ-հոգեբանական առանձնահատ-կություններով: Ամբոխի մարդու մարդաբանական հիմնական բնութագրիչներից մեկն անդեմությունն է, մի որակ, որի պատճառը սոցիոմշակութային արմատ-ներից կտրված և ինքնությունը կորցրած այն մարդն է, ով ունի նոր կենսիմաստի կարիք:

Եթե ավանդական հասարակություններում գործող սոցիալական աստիճանակարգությունն արդեն իսկ կանխորոշում էր աշխարհում մարդու զբաղեցրած տեղի և դերի մասին սահմանները, ապա ժամանակակից աշխար-հում ամբոխը բաղկացած է սոցիալական նույնականություններից և սոցիոմշա-կութային արմատներից կտրված անդեմ մարդկանցից: Պատմության թատերաբեմում ամբոխի մարդու հայտնվելը դասվում է արդյունաբերական քա-ղաքակրթության հարուցած մարդաբանական ճգնաժամի հիմնական պատճառ-ներից մեկը: Ու թեև անդեմությունը քաղաքակրթությանը ընդհանրապես բնորոշ երևույթ է, բայց ժամանակակից ամբոխի մարդն այն դարձրել է յուրատեսակ սո-ցիոմշակութային դիմակ: Հարկ է նաև նկատել, որ արդի հասարակություններում ամբոխի

մարդու սոցիոմշակութային դիմակը դարձել է «առանց պատմության» և առանց վերաբերմունքի մարդու հուսալի ապաստարան: Ուստի տեղին է այն մտահոգությունը, որ ժամանակակից աշխարհում հասարակության զանգվածացման միտումները ձևավորում են սոցիոմշակութային այնպիսի միջավայր, որտեղ մարդն ի վերջո վերածվում է ամբոխի մարդու: Այս իմաստով՝ ամբոխի մարդը արդի քաղաքակրթությանը բնորոշ սոցիոմշակութային տեսակ է, որը որակական որոշակիություն է ստանում զանգվածային հասարակության ձևավորման համատեքստում, և որին բնորոշ են անդեմությունը, կարծրատիպային մտածողությունը, նմանակման սկզբունքով սոցիոմշակութային վարքի դրսևորումը, միաչափ կենսակերպը և այլն: Ըստ էության գործ ունենք մարդաբանական արդի ճգնաժամի հետ, երբ մարդը կորցնելով սոցիալական կամ քաղաքական նույնականությունները, դառնում է անդեմ ամբոխի մարդ, առաջանում է մարդ-աշխարհ հարաբերությունների կենսիմաստային խզում, ինչի հետևանքով նա կորցնում է աշխարհում կողմնորոշվելու սոցիոմշակութային չափորոշիչները, ինչն էլ ամբոխի մարդու մոտ ձևավորում է սոցիոմշակութային դիմակով ներկայանալու մղում: Եվ եթե արդիականության դարաշրջանի քաղաքակրթական և քաղաքական իրողությունների համատեքստում ամբոխի մարդը կրում էր ընդվզման, քաղաքական հավակնոտության, վեհապաշտության սոցիոմշակութային դիմակը, ապա արդի իրողությունների համատեքստում նա փորձում է ցինիզմի սոցիոմշակութային դիմակը դարձնել իր վերաբերմունքի արդարացման «քաղաքակրթական» եղանակ:

Երկրորդ՝ «**Ստվերային ինքնության դրսևորումները ամբոխի մարդու հոգեկերտվածքում**», ենթագլխում ներկայացվում է ամբոխի մարդու հոգեկերտվածքին բնորոշ առանձնահատկությունները, որտեղ համապատասխան սոցիոմշակութային միջավայրերում դրսևորման հնարավորություն են ստանում ստվերային ինքնությանը բնորոշ տարրեր: Բանն այն է, որ ամբոխի մարդու հիմնական բնութագրիչը նրա անդեմությունն է, ինչը վկայում է, որ ամբոխի մարդը սոցիոմշակութային և մարդաբանական այն որակների շարքից է, ինչպիսիք են սոցիալական ամբողջի հետ նույնականալու հակվածությունը, «հոտի» մասնիկ զգալու պահանջը, զանգվածային մշակույթի և ճաշակի կրող լինելը, կարծրատիպային վարք ունենալը, նմանակման և հուզական վարակի ենթարկվելը: Պատահական չէ, որ մի շարք տեսաբաններ (Ֆրոյդ, Յունգ, Մոսկովիչի) հաճախ ամբոխին համեմատում են նախնադարյան հոտերի հետ, որոնց կենսագործունեությունը ենթարկվում է ոչ թե մշակութային հար-կադրանքի՝ «ռեալության» սկզբունքներին, այլ «հաճույքի» սկզբունքին: Այսինքն՝ որպես «կազմակերպված հասարակության» հակոտնյա,

ամբոխի կենսագործունեության մեջ տիրապետող են դառնում ստվերային ինքության այն որակները, որոնք ունեն կենսաբանական դրսևորումներ, պարզունակ են և ասոցիատիվ: Ամբոխի մարդու ստվերային ինքնության մյուս առանձնահատկությունն էլ այն է, որ նրա կենսաշխարհի կառուցարկման հիմքում ընկած են ամբոխի մարդու հոգեկերտվածքում առկա արքետիպերը: Այս առնչությամբ հարկ է նկատել, որ ստվերային ինքնության որակները դրսևորման հնարավորություններ են ստանում այն ժամանակ, երբ տվյալ սոցիումը համակվում է մարդու մեջ «ապրող» ամբոխային հոգեբանությամբ, երբ սոցիալական աշխարհի դերակատար է դառնում ամբոխի մարդը:

Երրորդ՝ «**Առասպելականացումը որպես ամբոխի մարդու կենսաշխարհի կառուցարկման եղանակ**», ենթագլխում վերլուծվում են ամբոխի մարդու կենսական տարածության կառուցարկման օրինաչափությունները՝ հանգամանորեն անդրադառնալով սոցիոմշակութային իրականության առասպելականացման՝ որպես ամբոխի մարդու կենսական տարածության կառուցարկման եղանակի սոցիալ-փիլիսոփայական հիմնահարցերին: Այս առնչությամբ հատուկ անդրադարձ է եղել արդիականության նախագծի հիմքում ընկած այնպիսի առասպելների, գաղափարախոսությունների և ուտոպիաների գործառական առանձնահատկություններին, ինչպիսիք են ժողովրդավարությունը, ազատականությունը, ընկերվարությունը, համայնավարությունը և այլն, որոնք հանգամանքների բերումով պատմության թատերաբեմում հայտնված անդեմ ամբոխի մարդու կողմից ընդունվեցին որպես նույնականացման նոր միջոցներ, որով նա աշխարհը մեկնաբանելու և այդ աշխարհում կողմնորոշվելու նոր հնարավորություններ էր ստանում:

Արդիականության դարաշրջանի ուտոպիաներն ու առասպելները ամբոխի մարդու կողմից կենսիմաստային նոր ուղղորդիչներ են դառնում նաև այն պատճառով, որ դրանք հագեցած էին ամբոխի մարդու հոգեկերտվածքին հարազատ արքետիպային տեքստերով: Արդիականացման նախագծի գրեթե բոլոր առասպելներն ու ուտոպիաները ունեն չարի և բարու մասին պատումներ, պատմությունը ներկայացնում են որպես արդար հասարակարգ՝ «ավետյաց երկիր» կառուցարկելու ծրագիր, որպես կատարյալ հասարակության տեսլական: Ասվածից հետևում է, որ ժամանակակից ամբոխի մարդը աշխարհընկալմամբ պարադոքսալ է: Ամբոխի սոցիոմշակութային այս բնութագրությունից հետևում է, որ արդի քաղաքակրթության հարուցած գաղափարների և զանգվածների աննախադեպ տեղաշարժի հետևանքով մի կողմից փլուզվում է մարդկանց ու զանգվածների նույնականության սոցիոմշակութային նախորդ համակարգը, մյուս կողմից՝ ձևավորվում է նոր իրողություններին համապատասխան

նույնանություն: Եվ դա պատահական չէ, քանի որ իրենց արմատներից կտրված զանգվածները հայտնվում են սոցիալ-տնտեսական, քաղաքական և սոցիոմշակութային նոր միջավայրում, որի կենսապայմաններին հարմարվելու համար զգացվում է կենսիմաստային նոր կողմնորոշիչների կարիք: Պատահական չէ, որ վերջին երկու հարյուրամյակում արևմտյան քաղաքակրթության մեջ ձևավորվեցին ու շրջանառվեցին պատմությունը մեկնաբանող զանազան գաղափարախոսություններ, ուտոպիաներ և քաղաքական առասպելներ:

Չորրորդ՝ «**Անտարբերությունը որպես ամբոխի մարդու սոցիոմշակութային դիմակ**», ենթագլխում արդի քաղաքակրթական, քաղաքական և սոցիոմշակութային փոխակերպումների համատեքստում քննարկվում են ժամանակակից ամբոխի մարդու կողմից հաճախ խաղացվող անտարբերության առանձնահատկություններն ու դրսևորման ձևերը: Եթե արդիականության դարաշրջանի ամբոխի մարդը «հավակնոտ» էր, տոգորված էր արդիականացման նախագծի մետապատումներով և հավատում էր լուսավոր ապագայի կառուցարկման հնարավորությանը, ապա ժամանակակից ամբոխի մարդը բնույթով հաճախ ցինիկ է, չի հավատում քաղաքական խոստումներին և գաղափարական տեսլականներին, քանի որ դրանց արդյունքները (համայնավարություն, նացիոնալ-սոցիալիզմ, ազատականություն և այլն) մեծ հաշվով բացասական հետևանքներ են թողել զանգվածների կյանքում՝ նպաստելով ինչպես վախճանաբանական, այնպես էլ հոռետեսական տրամադրությունների ձևավորմանը: Պատահական չէ, որ արդիականության դարաշրջանի մետապատումներից շատերը, ի վերջո, կազմաքանդվեցին և կորցրին իրենց երբեմնի մետաֆիզիկական գրավչությունը (օրինակ՝ կոմունիզմ, նացիոնալ-սոցիալիզմ, ֆաշիզմ և այլն): Քաղաքական և սոցիոմշակութային զանազան մանիպուլյացիաների ենթարկված ժամանակակից ամբոխի մարդը անցել է լուրջ փորձութ-յունների միջով և հաճախ այլևս չի հավատում «զանգվածներին ծառայող» քաղաքականությանն ու քաղաքական առասպելներին: Իդեալների և արժեքների արժեզրկման հետևանքով ժամանակակից ամբոխի մարդը ձեռք է բերել մարդաբանական և սոցիոմշակութային այնպիսի որակներ, ինչպիսիք են սպառողականությունը, չմասնակցության կենսակերպը, ցինիկ կենսադիրքորոշումը, սոցիալականության և քաղաքականության նկատմամբ անհաղորդությունը, անտարբերությունը և այլն: Որակներ, որոնք անդեմ ամբոխի մարդուն մղում են խաղալու սոցիալական և քաղաքական գործընթացների նկատմամբ անտարբերության սոցիոմշակութային դիմակը:

Եթե նախորդ դարաշրջանի տեսաբանները ամբոխի մարդուն որակում էին որպես ընդվզող (Օրտեգա-ի-Գասսետ), հուզական (Լեբոն), բռնատի-րական (Արենդտ, Ռայխ), հանցավոր

(Սիգելե), ապա ժամանակակից ամբոխի մարդը բնութագրվում է սկզբունքորեն այլ սոցիոմշակութային որակներով և մարդաբանական հատկություններով՝ լռության (Բոդրիար), միաչափության (Մարկուզե), «ողջախոհության» (Ռեինգոլդ), մենության (Ռիսմեն), սպառողական-ության (Գի դե Բոր) և ի վերջո՝ անտարբերության:

Եվ այսպես՝ ժամանակակից ամբոխի մարդն այլևս արդիականության դարաշրջանի այն «միամիտ» ամբոխի մարդը չէ, ով, հավատում էր լուսավոր, ուսյալ, բարեկիրթ և արդար հասարակությունների մասին ուտոպիաներին և առասպելներին և պատրաստ էր անգամ ինքնազոհողության: Հետարդիականության դարաշրջանի ամբոխի մարդը հաճախ անտարբեր է, և դժվար է նրան ներքաշել քաղաքական այնպիսի իրադարձությունների հորձանուտը, որոնք անմիջապես չեն առնչվում «այժմ և այստեղ» կյանքի նպատակներին ու ծրագրերին: Բայց ամբոխի այդ «հասունացումը» կարող է նաև հարուցել քաղաքակրթական նոր ճգնաժամեր, որովհետև քաղաքականության՝ որպես հանրության սոցիալական պահանջների և շահերի ներկայացման ոլորտի մասին ընկալման չքացումը, լուսավոր ապագայի մասին քաղաքական նախագծերի նկատմամբ հավատի կորուստը հազիվ թե նպաստեն պատմության շարունակականությունն ապահովող սոցիոմշակութային ազդակների ձևավորմանը:

Երկրորդ՝ «**Ցինիզմը որպես արդիականության սոցիոմշակութային ճգնաժամի մարդաբանական փառանիշ**», գլխում վեր են հանվում ցինիզմի՝ որպես ժամանակակից ամբոխի մարդու սոցիոմշակութային դիմակի ձևավորման մարդաբանական, քաղաքական և քաղաքակրթական նախադրյալները, սոցիոմշակութային ոլորտներում դրսևորման առանձնահատկությունները: Ցի-նիզմը դիտվում է որպես կենսափիլիսոփայության այնպիսի եղանակ, որը գերակայում է այն հասարակություններում, որտեղ կազմաքանդվել և արժեզրկվել են սոցիոմշակութային կառուցվածքաստեղծ երբեմնի արժեքներն ու իդեալները, որտեղ գերիշխում են իրականության նկատմամբ հոռետեսական, ոչնչապաշտա-կան, հաճույքապաշտական և նյութապաշտական միտումները: Այս իմաստով ցինիզմը ժամանակակից ամբոխի մարդուն կենսիմաստային ապաստարան է ծառայում՝ երբեմնի դավանած առասպելների, ուտոպիաների և գաղափարախո-սությունների արժեզրկումից պատսպարվելու համար:

Առաջին՝ «**Ցինիզմը որպես իդեալների կազմաքանդման սոցիոմշակութային հետևանք**», ենթագլխում ցինիզմը ներկայացվում է որպես արդիականացման նախագծի ուտոպիաների, առասպելների և գաղափարախո-սությունների հիմքում ընկած իդեալների և արժեքների կազմաքանդման կամ ճգնաժամի սոցիոմշակութային հետևանք: Որպես կենսադիրքորոշման եղանակ և կենսափիլիսոփայություն,

ցինիզմը պատմականորեն բնորոշ է եղել հատկա-պես այն հասարակություններին, որոնք գտնվել կամ գտնվում են արմատական փոխակերպումների և, հետևաբար, սոցիալ-տնտեսական, քաղաքական, մար-դաբանական և սոցիոմշակութային ճգնաժամի մեջ: Պատահական չէ, որ ձևաբանորեն բարդ այդ երևույթը աշխարհայացքի և կենսադիրքորոշման կարևոր բաղադրամաս է ծառայել առասպելական-դիցաբանական աշխարհա-պատումից բանական աշխարհի կառուցարկման անցնող հին Հունաստանում (կինիզմ), միջնադարյան կրոնական աշխարհապատումից բանապաշտական աշխարհի կառուցարկման լուսավորականության դարաշրջանում (նիհիլիզմ): Աշխատանքի այս բաժնում հիմնավորվել է այն թեզը, որ ցինիզմը, որպես սոցիոմշակութային արժեքներ և իդեալներ ժխտող կենսափիլիսոփայության եղանակ, մի շարք գործոններով տարբերվում է կինիզմից և նիհիլիզմից: Եվ կինիզմը, և նիհիլիզմը, լինելով ժխտողական, քննադատական կենսադիրքո-րոշման եղանակներ, այնուամենայնիվ բնույթով կառուցողական կենսափիլիսո-փայություններ էին: Հին աշխարհի կինիկներն, օրինակ, ծաղրելով ժամանակի տիրող կարգերն ու «սին» արժեքները, այնուամենայնիվ, առաջարկում էին վերափոխել աշխարհը, վերադառնալ «իրական» և «ճշմարիտ» արժեքների, վերականգնել բնության հետ բնական հարաբերությունների երբեմնի կապերը: Նույն տրամաբանության մեջ է դիտարկվում նաև արդիականության դարաշր-ջանին բնորոշ նիհիլիզմի կենսափիլիսոփայությունը: Մերժելով իրականության մեկնաբանման կրոնական պատումները, վերջիններիս փոխարեն առաջարկելով աշխարհիկ, մարդակենտրոն և սոցիոկենտրոն արժեքներ և իդեալներ, ինչից ծնունդ են առնում արդիականության դարաշրջանի առասպելներն ու ուտոպիա-ները, նոր ժամանակների մտածողները առաջարկում էին աշխարհի պատկերը կառուցարկելիս հիմք ընդունել մարդուն և բանականությանը: Այդ տեսակետից կարելի է ասել, որ նոր ժամանակների առասպելներն ու գաղափարախոսութ-յունները (ժողովրդավարություն, ազատականություն, համայնավարություն, ըն-կերվարություն, ազգայնականություն և այլն) ըստ էության հանդիսանում են միջնադարյան կրոնական պատումների արժեքաբանական այլընտրանքներ: Փաստորեն և հունական կինիզմը, և արդիականության դարաշրջանի նիհի-լիզմը, մերժելով ժամանակի տիրող սոցիոմշակութային կարգերը, առաջարկում էին արժեքաբանական այլընտրանքներ՝ ի տարբերություն հետարդիակա-նության ցինիզմի, որը մերժելով արդիականացման նախագծի իդեալներն ու արժեքները, փոխարենը նոր արժեքներ ու տեսլականներ չի առաջարկում: Այս իմաստով ցինիզմը մշակույթի ճգնաժամային վիճակի

հանդեպ այնպիսի արձագանք է, որը դրսևորվում է ինչպես համակարգային երևույթ, այնպես էլ աշխարհի անհատական ընկալման ձև: Ընդհանուրն այն է, որ երկու դեպքում էլ այն ուղղորդված է գործող-տիրապետող կարգերին ու բարքերին և ինչ-որ իմաս-տով ուրիշների պարտադրված աշխարհից էկզիստենցիալ ազատագրման փորձ է ու կենսակերպ: Բայց ժամանակակից ցինիզմի առանձնահատկություններից մեկն այն է, որ չի ընդունում որևէ արդար հասարակության և լուսավոր ապա-գայի հնարավորություն, մերժում է ապագայի նախագծման որևէ ծրագիր և ընդունում է միայն «այժմ և հիման»:

Ժամանակակից «ցինիկ» ամբոխի մարդը, ի տարբերություն նախորդ դարաշրջանի հեղափոխական, հրճվող ու հուզական ամբոխի մարդու, հաճախ այլևս արագորեն չի արձագանքում շրջանառության մեջ դրվող նոր առաս-պելներին ու սոցիալական նախագծերին՝ գերադասելով լռել, արհամարհել կամ ցինիկաբար ծաղրել:

Երկրորդ գլխի երկրորդ՝ «**Ցինիզմը որպես ամբոխի մարդու կենսիմաստային ապաստարան**» ենթագլխում ցինիզմը մի կողմից դիտվում է որպես հանրանշանակ իդեալներից և արժեքներից հիասթափությանը հաջոր-դած մերժողական կենսափիլիսոփայության եղանակ, մյուս կողմից՝ որպես կեն-սիմաստային «ապաստարան», որտեղ ժամանակակից ամբոխի մարդը պաշտպանվում է արժեքների ճգնաժամ ապրող սոցիոմշակութային իրականութ-յունից՝ ծաղրելով ու հեգնելով ցանկացած արժեք և իդեալ: Սակայն «արժեքների վերարժևորման» ցինիկ կենսադիրքորոշումը մշակութային և բարոյական արժեքներից հրաժարվելու վտանգավոր կենսադիրքորոշում է, քանի որ նրա դավանած բարոյական հարաբերապաշտությունը քանդում է սոցիալական ավանդական արժեքների ու իդեալների գաղափարական հիմքերը: Այս համա-տեքստում ատենախոսության այս բաժնում քննարկվել են քաղաքականության, բարոյականության և սոցիոմշակութային ոլորտներում ցինիզմի դրսևորման որոշ առանձնահատկությունները:

Բարոյականության տեսանկյունից ցինիզմը դրսևորվում է բարոյական նորմերի, արժեքների, հանրանշանակ վարքի ձևերի նկատմամբ հարաբերա-պաշտական մոտեցման տեսքով: Արդի քաղաքակրթությունում տեղեկատվական հասարակության կայացման պայմաններում, երբ հասանելի ու ճանաչելի են ազգային ու սոցիալական առանձնահատկություններից բխող տարբեր աշխար-հընկալումներ, վարքի տարբեր նորմեր և արժեքներ, համընդհանրության հավակնող ամեն մի արժեք դիտվում է որպես հարաբերական: Այս իմաստով ժամանակակից ամբոխի մարդուն բնորոշ բարոյական հարաբերապաշտությունը և նրա ցինիզմի սոցիոմշակութային դիմակը փոխպայմանավորող իրողություն-ներ են:

Սոցիոմշակութային ոլորտում ցինիզմը ժամանակակից ամբոխի մարդու համար ոչ միայն կենսիմաստային ապաստարան է ծառայում, այլև հակամշակու-թային և հակասոցիալական վարքի «արդարացման» եղանակ է, քանի որ հետարդիական սոցիոմշակութային իրականությանը բնորոշ բարոյական «թողտվության» պարագայում, երբ համահարթեցված են համամարդկային արժեքները, մշակութային ընդօրինակելի վարքանմուշները, ապա հաճախ ընդօրինակելի կամ թույլատրելի է ամենատեսակ վարքի ձև:

Քաղաքականության ոլորտում ամբոխի մարդու ցինիզմը դրսևորվում է տարբեր քաղաքական համակարգերի կողմից գործադրվող մանիպուլյա-ցիաներին և գաղափարախոսություններին հակադրման տեսքով: Այս պարա-գայում ցինիզմը կատարում է դրական գործառույթ, քանզի առնվազն մատնանշում է քաղաքական համակարգի ինչ-ինչ թերացումների մասին, սակայն, միևնույն ժամանակ, այն վտանգավոր միտումներ է պարունակում քաղա-քականության՝ որպես հասարակության կյանքի կազմակերպմանն ու բարելավմանն ուղղված գործունեության ոլորտի լինելիության համար, քանզի այն ցինիզմի դիրքերից մեկնաբանելու դեպքում դիտվում է որպես իշխանության համար մղվող պայքարի ոլորտ, որտեղ արդեն գործում է մաքիավելիական «նպատակն արդարացնում է միջոցները» հայտնի սկզբունքը, ինչը կարող է անկանխատեսելի հետևանքներ ունենալ սոցիոմշակութային կարգի պահպան-ման տեսանկյունից:

Երկրորդ գլխի երրորդ՝ «**Չմասնակցության էթիկան որպես ժամանակակից մարդու կենսակերպ**» ենթագլխում հետազոտության նպատակը սոցիալական կյանքից տարերայնորեն կամ միտումնավոր օտարված ամբոխի մարդու՝ սոցիալ-քաղաքական իրադարձությունների հանդեպ նոր կենսադիրքորոշման՝ «չմասնակցության էթիկայի» առանձնահատկությունների վերլուծությունն է: Ժամանակակից սոցիալական աշխարհում երբեմնի կառու-ցողական իդեալների՝ քաղաքացիական ակտիվության, քաղաքական հավակ-նոտության, բանական էգոիզմի կարևորությունը աստիճանաբար նվազում է, և հաճախ ամբոխի մարդը կյանքի հանդեպ դիրքավորվում է որպես կողմնակի հանդիսատես՝ որդեգրելով այսպես կոչված չմասնակցության էթիկայի կեն-սակերպը: Չմասնակցության կենսակերպի տարածմանը նպաստում են արդի սպառողական և տեղեկատվական հասարակությունների սոցիոմշակութային կարգից բխող մի շարք առանձնահատկություններ:

Սպառողական հասարակության ամբոխի մարդը սոցիոմշակութային արժեքները և կյանքի իմաստի մասին խորհրդածությունները դիտում է որպես իր «սպառման իրավունքի» նկատմամբ ճնշումներ: Բանն այն է, որ արժեքներն

ու իդեալները մշտապես ենթադրում են սիմվոլիկ բռնության որոշակի մակար-դակ, որոշակի պարտադրանք, քանի որ վերջիններս ինչ-որ իմաստով սրբազանացված և ավանդույթի տեսք ստացած վարքանմուշներ են, որոնք նաև ակտիվորեն մասնակցում են մարդու մշակութային նկարագրի ձևավորման գոր-ծընթացներին՝ նրան «տեղավորելով» հանրայնորեն ընդունված սոցիոմշա-կութային կաղապարի մեջ: Ի դեպ, այդ սոցիոմշակութային կաղապարը հարուցում է երկատվածության մշտական զգացում, քանզի մի կողմից մարդուն առաջարկում է կենսական ժամանակը վատնելու անսահման հնարա-վորություններ, մյուս կողմից էլ, սակայն, սահմանափակում է «հաճույքի սկզբուն-քի» սպառողական նկրտումները:

Մյուս կողմից էլ ժամանակակից քաղաքակրթությանը բնորոշ տեղեկատվական հասարակությունների կայացումը նույնպես նպաստում է չմասնակցության կենսակերպի տարածմանը: Խնդիրն այն է, որ ժամանակակից տեղեկացված և բազմակողմանիորեն լուսաբանված ամբոխի մարդը, ով ազա-տության և բարեկեցության երկընտրանքը լուծել է բարեկեցության օգին, հաճախ այլևս քաղաքական և քաղաքացիական հավակնություններ չի դրսևորում՝ վախենալով, որ իր գործունեական էներգիայի անմիտ ու չհաշվարկված սպառումը կարող է վտանգել իր սոցիալական կարգավիճակը: Բացի դրանից, զանազան մանիպուլյատիվ հնարքների միջոցով տեղեկացվա-ծության իսկությունն այնպես է աղճատվում, որ դառնում է սիմուլյատիվ իրակա-նության ձևավորման պատճառ: Սիմուլյատիվ-վիրտուալ իրականության մեջ տեղեկատվության առատությունը «կաթվածահար» է անում ժամանակակից ամբոխի մարդուն, դարձնում անտարբեր ու անպատասխանատու՝ հարուցելով անորոշության, անօգնականության ու անելանելիության զգացում: Ավելին, այդ ամենի հետևանքով զանգվածների մեջ անհրաժեշտաբար ձևավորվում է սոցիալ-քաղաքական իրադարձություններին չմասնակցելու կենսադիրքորոշում: Հարկ է նկատել, որ ժամանակակից ամբոխը ոչ թե անտարբեր է քաղաքակա-նության նկատմամբ, այլ պարզապես չի մասնակցում կամ էականորեն ներառված չէ քաղաքական գործընթացներում: Այս տեսանկյունից չմասնակ-ցության սոցիոմշակութային կենսակերպը մարդաբանական ճգնաժամի իրական ախտանիշ է, քանզի այդ դեպքում վտանգվում է սոցիալականության տեսանկյունից կառուցվածքաստեղծ ընդհանուր մետապատումների՝ առասպել-ների, ուտոպիաների և գաղափարախոսությունների կերտման հնարավորությունը:

«**Եզրակացություն**» -ում ամփոփվում են ատենախոսության հիմնական արդյունքները, կատարվում են տեսական ընդհանրացումներ, որոնց հիմքի վրա կարելի է առանձնանցել հետևյալ դրույթները՝

- Արդիականության դարաշրջանի ամբոխի մարդու կենսիմաստային տարածությունը կառուցարկվում է ժամանակի առասպելական, ուտոպիական գաղափարախոսություններով, հետևաբար նա նաև քաղաքականապես հավակ-նոտ էր և հավատում էր լուսավոր ապագայի և իդեալական հասարակության կառուցարկման հնարավորություններին: Բայց այդ ամենին զուգահեռ ժամա-նակակից աշխարհում սոցիոմշակութային համակարգաստեղծ արժեքների նկատմամբ սկսել է ձևավորվել մերժողական մի վերաբերմունք, մի նոր կենսա-փիլիսոփայություն, որը ավելի հոռետեսական է, անհեռանկարային և ցինիկ: Պարադոքսալ է, բայց դյուրահավատ և առասպելներով սնվող երբեմնի ամբոխի մարդը հետարդիականության նոր իրողություններում այլևս նոր առասպելներ չի արարում և հաճախ չի հավատում նաև իրեն մատուցած առասպելներին և ուտոպիստական նախագծերին:

- Արդի հոգևոր ճգնաժամի համատեքստում ընթանում են մարդաբանական լուրջ փոխակերպումներ, ձևավորվում է սոցիոմշակութային նոր բնութագիր ունեցող ամբոխի մարդու մի տարատեսակ, որին բնորոշ է ցինիզմն ու «իրատեսությունը»: Մասնավորապես, եթե արդիականության դա-րաշրջանի ամբոխի մարդուն բնորոշ էր ընդվզումը, հուզականությունը, քաղաքական հավակնությունները և ակտիվությունը, ապա ժամանակակից ամբոխի մարդուն կարելի է բնութագրել չմասնակցության, սպառողականության, անտարբերության, անհաղորդության, ցինիզմի սոցիոմշակութային որակներով:

- Արդի քաղաքական գործընթացների պայմաններում ամբոխի մարդը հաճախ կրում է անտարբերության սոցիոմշակութային դիմակը, քանի որ իր կենսական տարածության կառուցարկման հիմքում ընկած երբեմնի առասպել-ները, ուտոպիաներն ու գաղափարախոսությունները քաղաքական տարբեր համակարգերում օգտագործվում են որպես մանիպուլյացիոն գործիքներ, որպես զանգվածային գիտակցության ուղղորդման և կառավարման միջոցներ, ինչի հետևանքով նա հաճախ վերջիններիս ընկալում է որպես խաբկանքներ, պատ-րանքներ, որոնց մարմնավորման նկատմամբ նախընտրում է մնալ անտարբեր:

- Ցինիզմը ժամանակակից ամբոխի մարդու համար ծառայում է որպես կենսիմաստային ապաստարան, միաժամանակ այն նաև «արդարացնում» է հակամշակութային և հակասոցիալական վարքի ամեն կերպ, քանի որ եթե արժեզրկված են հանրանշանակ և գերակա բարոյական արժեքներն ու ընդօրինակելի մշակութային վարքանմուշները, ապա սկզբունքորեն ընդօրինակելի կամ թույլատրելի է ամեն տեսակ վարքի ձև:

- Ժամանակակից ամբոխի մարդուն բնորոշ բարոյական հարաբերա-պաշտությունը, գործնապաշտությունը,

սպառողականությունը, հոռետեսությունը և ի վերջո ցինիզմը միաժամանակ և սոցիոմշակութային ճգնաժամի մարդաբանական ախտանիշ են, և սոցիոմշակութային վտանգներ պարունակող կենսափիլիսոփայության եղանակներ:

- Հետարդիական սոցիոմշակութային միջավայրում տարածվող ցինիզմի և բարոյական հարաբերապաշտության պայմաններում երբեմնի կառուցողական իդեալների՝ քաղաքացիական ակտիվության, քաղաքական հավակնոտության, բանական էգոիզմի կարևորությունը աստիճանաբար նվազում է, ինչի հետևանքով ժամանակակից ամբոխի մարդը հաճախ որդեգրում է այսպես կոչված չմասնակցության էթիկայի կենսակերպը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Ցինիզմը որպես իդեալների կազմաքանդման սոցիոմշակութային հետևանք, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1 (146), Երևան, 2016, էջ 196-211:
2. Ամբոխի մարդաբանական բնութագիրը հետարդիականության համատեքստում, «Բանբեր Երևանի համալսարանի», «Փիլիսոփայություն, Հոգեբանություն», № 1 (19), Երևան, 2016, էջ 34-50:
3. Առասպելը որպես ամբոխի մարդու սոցիոմշակութային իրականության կառուցարկման գործիք, «Բանբեր Երևանի համալսարանի», «Փիլիսոփայություն, Հոգեբանություն», № 3 (18), Երևան, 2015, էջ 3-21:
4. Ստվերային ինքնությունը որպես ամբոխի մարդու սոցիոմշակութային որակ, «Բանբեր Երևանի համալսարանի», «Փիլիսոփայություն, Հոգեբանություն», № 2 (17), Երևան, 2015, էջ 17-34:

5. Դիմավորության և անդեմության երկընտրանքը զանգվածային հասարակության սոցիոմշակութային միջավայրում, «Բանբեր Երևանի համալսարանի», «Փիլիսոփայություն, Հոգեբանություն», № 1 (16), Երևան, 2015, էջ 3-14:
6. Չմասնակցությունը որպես սոցիոմշակութային կենսակերպ, «Բանբեր Երևանի համալսարանի», «Փիլիսոփայություն, Հոգեբանություն», № 2 (143), Երևան, 2014, էջ 3-14:
7. Ցինիզմի ձևավորման սոցիոմշակութային նախադրյալները, «Բանբեր Երևանի համալսարանի», «Փիլիսոփայություն, Հոգեբանություն», 141.4, Երևան, 2013, էջ 36-47:
8. Զանգվածները որպես սոցիոմշակութային արժեքների «գերեզմանոց», «Անցումային հասարակություն. Սոցիոմշակութային փոխակերպումներ», Պրակ 8, Երևան, 2011, էջ 97-110:

Бабаджанян Левон Гарникович

“ЦИНИЗМ КАК СОЦИОКУЛЬТУРНАЯ МАСКА ЧЕЛОВЕКА ТОЛПЫ”

Диссертация на соискание ученой степени кандидата философских наук по специальности 09. 00. 04 “Социальная философия, этика”.
Защита состоится 23 июня 2016 года в 15:00 на заседании специализированного совета Философии и социологии 013 ВАК в ЕГУ, по адресу: 0025, г. Ереван, улица Х. Абовяна 52а, Ереванский государственный университет.

Резюме

Цинизм как нигилистическая, всеотрицающая жизненная философия сопровождала весь исторический путь человеческой мысли. Однако в условиях индустриального общества в результате цивилизационных, политических, экономических, исторических, социальных и культурных трансформаций формируется некое новое социокультурное пространство, в котором часто искажаются функционирующие ранее смысловые ориентиры бытия. Одновременно с образованием нового социокультурного пространства

цинизм приобретает возможность новых форм проявления. В контексте современности цинизм характеризуется рядом функциональных и феноменологических особенностей. В диссертации выделяются социально-политические, социально-экономические, социально-антропологические и этико-психологические факторы проявления последнего. В результате их анализа выясняется, что цинизм, имеющий как личностное, так и общественное проявление, является позицией, содержащей опасные препятствия с точки зрения возможностей осмысления бытия. Именно поэтому в целях обеспечения нормальной жизнедеятельности, как каждого отдельного индивида, так и всего общества в целом, вопрос о преодолении цинизма может стать жизненно важной задачей.

Одной из социокультурных особенностей современного мира рассматривается восприятие индивида в качестве социального существа, обладающего индивидуальностью (или лицом). Однако современный человек сталкивается с обезличивающими и рождающими одномерность стихиями массового общества, возникшими в результате тех или иных цивилизационных, политических или культурных трансформаций. В условиях массового общества уже функционируют характерные для толпы социокультурные закономерности, в результате чего человек, под влиянием “растворяющего”, обезличивающего воздействия массовой толпы, оказывается перед реальной угрозой потери собственного лица (или потери своей уникальности и неповторимости). В этом контексте цинизм рассматривается как социокультурная маска анонимной человека толпы.

Оказавшись на авансцене рационализированной цивилизации, человек толпы демонстрирует иррациональное социокультурное поведение. Дело в том, что человеку толпы свойственны некоторые теневые качества, которые отвергнуты, изолированы и заключены в бессознательное человечества еще с перехода общества от доцивилизованного состояния в цивилизованного. В результате чего в модернизированной, секюларизированной цивилизации воскрешаются мифы и архетипы, которые были скрыты в древних слоях коллективного бессознательного человечества. Таким образом, в веке модерна мифы и мифическое мышление конструируют социокультурную реальность человека толпы.

Но если человек толпы в веке модерна определялась качествами бунтующего, эмоционального, агрессивного, политический претенциозного социального организма, то в веке постмодерна толпа приобретает иные социокультурные качества и особенности, такие как пассивность, инертность, цинизм, безразличность и так далее. Облик современного человека толпы определяется социокультурными особенностями века постмодернити, такие как потребительство, индивидуализиоравнность, политическая инертность, гедонизм и цинизм.

Цинизм является основной мировоззренческой ориентацией современного массового сознания и массового поведения. Как типичный мировоззренческий и поведенческий стиль современности цинизм формировался в социокультурной среде постмодерна и в результате уравнения идеалов и ценностей проекта модерна. Проект модерна конструирует новые идеалы и ценности для века “модернити”, которые в

результате ряда цивилизационных, политических и антропологических развитии в современном мире претерпевают обесценивание. В результате появляется цинизм как жизненная философия, которая уже не принимает права быта каких либо социокультурных ценностей и идеалов вообще.

Цинизм современного человека толпы формирует благоприятную среду для распространения неучастия как образа жизни. Последнее в диссертации рассматривается в качестве особой формы социальности, диктующей стандарты, противоположные жизненным ориентирам человека-гражданина. Неучастие как социокультурный образ жизни характерно для трансформационных обществ, содержащих специфические предпосылки его зарождения и распространения. Но если в постиндустриальных обществах как в стабильных социальных системах неучастие в какой-то степени свидетельствует о надежности и функциональной эффективности, то в условиях переходных обществ оно может привести к непредсказуемым и неопределенным последствиям.

Babajanyan Levon Garnik

“THE CYNICISM AS A SOCIOCULTURAL MASK OF THE MAN OF THE CROWD”

Thesis for Receiving Academic Degree of Candidate of Philosophical Sciences
Area of Specialization: “Social Philosophy, Ethics”.
The dissertation defense will be held on 23 June, 2016, at 15:00 at Yerevan State University at the committee meeting of Philosophy and Sociology with the specialty of HCC 013,
Address: 0025, 52a Abovyan str., YSU, Yerevan.

Resume

Throughout history cynicism has always accompanied human thought as a refusing-denialist attitude towards sociality. In industrial society due to political, economic, historical, social and cultural transformations a new social-cultural space was formed where formerly functioning meaning directives of being are distorted. During the formation of new social-cultural environment new opportunities for cynicism emerge. In the context of modernity cynicism can be described by a number of functional and phenomenological peculiarities. Social-political, social-economic, social-anthropological and moral-psychological functional factors of cynicism are distinguished. When these factors are analyzed it turns out that cynicism, a phenomenon that can surface both on individual and social levels, is such an attitude that contains dangerous obstacles for giving a meaning to being. Overcoming cynicism may become an issue of vital significance for ensuring survival of both each individual and the whole society.

The formation of cynicism in modern societies is based on the embodiment process of the modernisation enlightening project. One of the breaking (crucial) points of the civilization history was the modernisation enlightening project. However, as a result of some civilizational, anthropological, and political transitions,

enlightening project of modernisation finally leads to formation of mass society, where the main character of socio-cultural relations becomes so called “the man of the crowd”. However the contemporary man who has the right of being individuality runs into defacing, one-dimensionalising elements of mass culture which has emerged as a result of some civilizational, political and cultural transformations. Regularities peculiar to the crowd function within mass culture and as a result being subjected to dissolving, defacing influence of mass society one encounters the risk of losing the uniqueness of one’s own face. Appearing on the stage of civilisation based on the ideals and values of modernity the man of the crowd, however, illustrates irrational socio-cultural behaviour. As an implication of realisation of modernisation project the shadowed identity of a man which is alienated by rationality becomes a socio-cultural quality of the man of the crowd.

The ideas and ideals of the project of modernity considered as a basics of construction of the modern social-cultural reality. But because of the modernization the demythologized, demystified modern social-cultural space is incurred of the invasive activity of the man of the crowd, which is the offspring of the modernisated civilization. The man of the crowd obliges the modern civilization to accept its own social-cultural reality, because of what the myths and archetypes, which were hidden in the archaic layers of collective unconsciousness of the mankind, emerge in the modernisated, rationalized current civilization. So, in the modern world myths and mythical consciousness construct the social-cultural reality of the man of the crowd.

If the crowd of the era of modernity was determined as an emotional, aggressive, politically pretentious social organism, therefore in the era of postmodernity the crowd purchases sociocultural features like indifference, passivity, cynicism and so on. The shape of current man of the crowd is determined by the sociocultural features of the era of postmodernity, like consumption, political indifference, hedonism and cynicism.

The cynicism is a major orientation of the mass conscience and behavior of postmodernity. As a typical style of worldview and behavior of modernity the cynicism formed because of the deconstruction of ideals and values of the project of modernity. The project of modernity constructed new values and ideals of the era of modernity, which because of the civilizational, political and anthropological developments were damaged and deconstructed. Consequently appears the current cynicism, which denies any sociocultural ideals and values at all.

In such societies, where the cynical attitude appears, the specific social-cultural space is formed for the distribution of the lifestyle of nonparticipation. The social-cultural lifestyle of nonparticipation is viewed as a special form of sociality, which dictates such standards of the life, which are in the contradiction of the vital activity of the citizen. But the social-cultural lifestyle of nonparticipation is peculiar for the transformational societies, where specific conditions for the distribution of the lifestyle of nonparticipation exist. But if the social-cultural lifestyle of nonparticipation in the postindustrial societies shows the stability and the solidity of social system, the social-cultural lifestyle of nonparticipation in the transformational societies may lead to the unpredictable and uncertain results.